

ձակել, անոր մէջ գետեղելու համար հրաշահիւս պատկերը, որ իսկապէս «Մասնոյ սարերու» կռուող գործիչինը եղաւ: Մաթիկը շատ պակաս կու գայ, այդպէս հասկըցլած մարդոց պարագրկումին: Երկրորդ կարեւոր արգելք մը իմ անբաւարար ընտելացումն է այդ աշխարհին, որ բառով, փոխաբերութեամբ, պատկերով (գրական յօրինումը) ու հոետորական գեղումով չի նուաճուիր: Երեւակայութիւնը շարժումներու գծագրութիւն մը կը նշմարէ, խաւարին մէջ ուրուագծուած կայծակէ մը լուսաւոր, բայց տկար է մարդերու իրականութիւնը փրկելու հարցին մէջ: Կռիւը գերագոյն շարժումն է անշուշտ, բայց կռուողը՝ հիմնանիւթը: «Մնացորդաց»ի յաջորդական հատորներուն, Տիգրանակերտի ճամբուն վրայ, ես ծրագրած եմ տալ քանի մը հատ վաւերական տիպարներ, որոնց հետ իմ շփումս բաւ է մարդոց անփոխարինելի իրականութիւնը ապահովելու: Կը ճանչնամ պետերը ու ատիկա բաւ է՝ անոնց ողբերգութիւնը մատչելի ընելու նախ ինծի, ապա՝ ընթերցողին: Հետեւաբար, սրբազան այդ պարտքին ուխտովը, հարկ կը սեպեմ դառնալ թերի Մաթիկին:

Մասունը ոսկեղարն է անոր յեղափոխական գործունէութեան: Չրլլար դաւը իր հասակին, թերեւս փրկէր ինքզինքը, վասնզի գործ ունէր պարզ մարդոց հետ: Այդ գեղացիները շեշտ ու կոշտ, աչքէ ու բերնէ, գառնուկի սիրտ կը կրէին ու խոր յարգանք, Կեդրոնի ներկայացուցիչէն: Անիկա աշխատեցաւ այդ լեռները հասկնալ, անշուշտ գիտութեան ուսանողի ակնոցով, երկրաբանօրէն եւ ցեղագրապէս: Ըրաւ ինքզինքը ծիծաղելի իր առաջին յամառութեամբը, որով պնդեր էր իր քաղքցիի հանդերձանքով, գլխաւորաբար՝ ոտքէն, բարձրանալ կատար մը, խանդավառուած բարձունքէն, որքան փառաւոր գէնքերը ուսընդանութ բարձրացող տղոցմէն: Ձգեր էին զինքը կէս ճամբուն, բզկտուած, կօշիկներէն ու տաբատէն: Այս պարտութիւնը պատրաստեց երկրորդը, դարձեալ յամառութեան շրջանակէն: Չճանչցաւ հեղինակութիւնը հոն գործող ընկերոջ մը, որ բաւարար փաս-